ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
10	Մաքսային մարմնի արական և իգական սեռերի հանրային ծառայողների դաշտային սվիտերներ Մաքսային մարմնի արական սեռի հանրային ծառայողների դաշտային սվիտերներ՝ 1 400 հատ Մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի, գնդապետի, փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի արական սեռի հանրային ծառայողների դաշտային սվիտերը (Նկար 46) բաց մոխրագույն (գունային կոդը #15-4101), իսկ աջ թևը՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) տրիկոտաժե գործվածքից է, որն ամբողջական է դարձնում առաջամասի ամբողջ երկայնքով համապատասխանաբար մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) և կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) գույներով գործված ՀՀ ՊԵԿ տարբերանշանը: Օձիքը՝ շրջանաձև բացվածքով: Գոտկատեղը, օձիքը և թևքերը՝ բաց մոխրագույն (գունային կոդը #15-4101) հավաքովի գործվածքով: Օձիքի միացման կարի տակ՝ պիտակ (Նկար 87): Սվիտերի երկարությունը՝ 66-76 սմ (ըստ չափ/հասակի): Գործվածքը՝ 50 տոկոս բամբակի և 50 տոկոս Պ/Է խառնուրդ, 300 գր/քմ ±5% խտությամբ: Մաքսային մարմնի իգական սեռի հանրային ծառայողների դաշտային բաճկոններ՝ 610 հատ Մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի, գնդապետի, փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի իգական սեռի հանրային ծառայողների դաշտային սվիտերը (Նկար 47) բաց մոխրագույն (գունային կոդը #15-4101), իսկ աջ թևը՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) տրիկոտաժե գործվածքից է, որն ամբողջական է դարձնում առաջամասի ամբողջ երկայնքով համապատասխանաբար մուգ կապույտ (գունային

	կոդը՝ #19-3921TPG) և կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) գույներով գործված ՀՀ ՊԵԿ տարբերանշանը: Օձիքը՝ շրջանաձև բացվածքով: Գոտկատեղը, օձիքը և թևքերը՝ բաց մոխրագույն (գունային կոդը #15-4101) հավաքովի գործվածքով: Օձիքի միացման կարի տակ՝ պիտակ (Նկար 87): Սվիտերի երկարությունը՝ 56-66 սմ (ըստ չափ/հասակի): Գործվածքը՝ 50 տոկոս բամբակի և 50 տոկոս Պ/Է խառնուրդ, 300 գր/քմ ±5% խտությամբ: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: *** Յուրաքանչյուր համազգեստի վրա պետք է լինի համապատասխան պիտակ, որի վրա պետք է նշված լինի կտորի կամ գործվածքի բաղադրությունը (տոկոսային հարաբերակցությամբ) և ապրանքի խնամքի առանձնահատկությունները (պատկերների կամ մակագրությունների տեսքով): **** 1-ից - 4-րդ, 6-ից – 11-րդ չափաբաժիններով նախատեսված յուրաքանչյուր ապրանք պետք է ունենա առանձին փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի անվանումը, չափսը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: ***** 5-րդ և 12-րդ չափաբաժինները՝ կոշիկների յուրաքանչյուր զույգը պետք է լինի առանձին ստվարաթղթե տուփով, որի վրա պետք է նշված լինի անվանումը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, չափսը: ****** Յուրաքանչյուր համազգեստի այն տեսակը, որի վրա առկա է կոճակ պետք է ունենա միևնույն կոճակից մեկական պահեստային օրինակ, որը պետք է ներսի կողմից պիտակով ամրացած լինի տվյալ համազգեստին: ******* Յուրաքանչյուր ապրանք, ըստ սեռերի, չափսերի և/կամ կոչումների, պետք է լինի առանձին պոլիէթիլենային փաթեթավորմամբ: ******** 1-ից – 4-րդ ,6-ից – 11-րդ չափաբաժիններով նախատեսված չափաբաժինների համար Մատակարարը պետք է իր միջոցների հաշվին ներկայացնի Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված, հավաստագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված երեսացուի գործվածքի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության և աստառի բաղադրության վերաբերյալ եզրակացություն: ********* Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցման ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ որպես նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերի նմուշները՝ ամրացված Ա4 չափի գծագրական թղթի (ստվարաթղթի) վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է Մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասանագիտական խմբի կողմից՝ ներկայացնելուց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: ********** Մաքսային մարմնի հանրային ծառայողների կոչումների քանակը, համազգեստի և բաղկացուցիչ պարագաների չափսերը, լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, Մատակարարի էլ.փոստին ծանուցում ուղարկելու միջոցով:

	********** Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 17-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1980-Ա որոշման դրույթներից, որում ներառված են յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրում համապատասխան համարնով նշված նկարները, ինչպես նաև համազգեստի բաղկացուցիչ մաս կազմող մաքսային մարմնի հանրային ծառայողի տարբերանշանների տեխնիկական բնութագրերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Гарун кари фабрика» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
10	